Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
մարտի 22-ի N 372 - Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ

1. Երևան քաղաքում իրականացվող՝ հանրային սննդի (բացառությամբ մինչև 50 քառ. մետր սպասարկման սրահի մակերես ունեցող օբյեկտների), հյուրանոցային տնտեսության օբյեկտների, վարսավիրական ծառայությունների մատուցման, ավտոտեխ-սպասարկման կայանների (կետերի), ավտոկանգառների, բիլիարդ խաղի կազմա-կերպման գործունեության համար արտոնագրային վճարների հաշվարկման նպա-տակով հիմք ընդունվող՝ Երևան քաղաքի գոտիները նկարագրվում են հետևյալ կերպ՝

Գոտի	Տարածք
Առաջին	Առաջին գոտու տարածքը սահմանագծվում է Մաշտոցի պողոտայով սկսած՝ Գրիգոր Լուսավորչի փողոցի հետ հատումից մինչև Սարյան փողոց, Սարյան և Մոսկովյան փողոցներով մինչև Մարշալ Բաղրամյան պողոտա, Մարշալ Բաղրամյան պողոտայով մինչև Մարշալ Բաղրամյանի առաջին փակուղի, այնուհետև Իսահակյան փողոցով մինչև Թամանյան փողոց, Թամանյան փողոցով մինչև Անտառային փողոց, Անտառային փողոցով մինչև Մատենադարան, այնուհետև՝ Տերյան և Աբովյան փողոցների վերջնամասով՝ ներառյալ Աբովյանի պուրակը, Աբովյան փողոցով մինչև Կորյունի փողոց, Կորյունի և Նալբանդյան փողոցներով մինչև Խանջյան փողոցի հետ հատվելը, Խանջյան, Ագաթանգեղոս, Գրիգոր Լուսավորիչ փողոցներով մինչև Մաշտոցի պողոտա:

Երկրորդ	Երկրորդ գոտու ներքին սահմանները համընկնում են առաջին գոտու տարածքը սահմանագծող փողոցների հետ, իսկ արտաքին սահմաններն անցնում են Աբովյան պուրակով, Մխիթար Հերացու փողոցով մինչև Կորյունի փողոցի հետ հատվելը, այնուհետև Չարենցի և Նար-Դոսի փողոցներով, Տիգրան Մեծի պողոտայով մինչև Քրիստափորի փողոց, Քրիստափորի փողոցով, Արշակունյաց պողոտայով մինչև Արշակունյաց 2-րդ նրբանցքի հետ հատվելը, Արշակունյաց 2-րդ նրբանցքով, Արտաշատի ջրանցքով մինչև Հաղթանակի կամուրջ, այնուհետև Հաղթանակի կամրջով, Մաշտոցի պողոտայի սկզբնամասով, Սուրբ Սարգիս եկեղեցու շրջակայքով՝ ներառյալ Ձորագյուղի տարածքը, այնուհետև Պարոնյան փողոցով մինչև Ձորափի փողոց, Ձորափի փողոցով մինչև Ուրուգվայի հրապարակ, կրկին Պարոնյան և Պռոշյան փողոցներով մինչև Այգեձորի փողոց, Այգեձորի փողոցով մինչև Մարշալ Բաղրամյանի 2-րդ նրբանցք, Մարշալ Բաղրամյանի 2-րդ նրբանցքով, Մարշալ Բաղրամյանի 3-րդ անցուղով, Սոսեի փողոցով մինչև Վաղարշյան փողոց, այնուհետև Անտառային փողոցով մինչև Թամանյան փողոցի հետ հատվելը:
Այլ	Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված՝ առաջին և երկրորդ գոտիներում չընդգրկված տարածք՝ բացառությամբ սույն հավելվածի 2-րդ կետով ներկայացված տարածքի:

2. Երևան քաղաքում հանրային սննդի (բացառությամբ մինչև 50 քառ. մետր սպասարկման սրահի մակերես ունեցող օբյեկտների) կազմակերպման գործունեության համար՝ բացի սույն հավելվածի 1-ին կետով սահմանված տարածքներից՝

1) առաջին գոտու տարածքում ներառվում են նաև Մյասնիկյան պողոտան և Աճառյան փողոցները՝ մինչև Աճառյան 2-րդ փակուղու հետ հատվելը, և Հրազդանի կիրճն ամբողջությամբ.

2) երկրորդ գոտու տարածքում ներառվում են նաև Լենինգրադյան և Ձանիբեկյան փողոցներն ու Սիլիկյան թաղամասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ